

12199



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«05» 11 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 234 - 24

Նախաձեռնող՝

«Շին-կոմֆորտ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Ազատության 35/33

Գործունեությունը՝

Միխայլովկա բնակավայրի կրթահամալիրի կառուցում

Լոռու մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 234 - 24

«05» հոկտեմբեր 2024թ.

**Լոռու մարզի Տաշիր համայնքի Միխայլովկա բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Շին-կոմֆորտ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Տաշիր համայնք, Միխայլովկա բնակավայր

**Ներածական մաս.** «Շին-կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից՝ փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Միխայլովկա բնակավայրում կառուցել կրթահամալիր:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը աշխարհագրական տեսակետից գտնվում է Լոռու մարզի Տաշիր համայնքի Միխայլովկա բնակավայրում՝ Տաշիր քաղաքից մոտ 2 կմ հյուսիս: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1524.0-1528.0 մետրի սահմաններում: Համաձայն ներկայացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրության արդյունքների տեղամասում իրականացված հորատման աշխատանքների ցուցանիշները ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել:



Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվում է կառուցել միջնակարգ դպրոց՝ 200 աշակերտի համար և մանկապարտեզ՝ 80 երեխայի համար:

Համաձայն էսքիզային նախագծի կառուցվելու է 2 հարկանի դպրոց և մանկապարտեզ, կլինի նկուղային հարկ, որի ընդհանուր մակերեսը կկազմի 440.64 մ<sup>2</sup>: Նոր դպրոցը նախատեսվում է կառուցել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, նախատեսվում է ունենալ հանդիսությունների դահլիճ՝ նախատեսված 144 հոգու համար, մարզադահլիճ 24.7\*18.0 սմ չափերով, բացօթյա մարզադաշտ, վազքուղի և այլն:

Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Երկրորդ հարկում դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց:

Նկուղային հարկը կունենա 21.6x20.4 մ չափեր, որտեղ նախատեսված է գրադարան, երկու դասասենյակ, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար և պոմպարան: Բոլոր հարկերն իրար հետ կապված են և ունեն հարկերը կապող միջհարկային ամբարձիչ՝ հաշմանդամների համար: Կրթահամալիրի գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ դպրոցական բացօթյա միջոցառումների համար:

Մանկապարտեզը բաղկացած կլինի 2 հարկից՝ 2 խմբի համար և միջանցքով կապված դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղակայված կլինեն նաև հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, երկրորդ հարկում նաև հանդիսությունների սրահ, վարիչի և բժշկի սենյակ: Դպրոցի մասնաշենքերը կառուցելուց հետո տարածքը ցանկապատվելու է 1.80 մ բարձրությամբ ճաղաշարով՝ 10 սմ բետոնե հիմքի վրա: Ապահովված է լինելու արտաքին լուսավորությամբ՝ հենասյուններով: Ֆուտբոլի դաշտի ցանկապատը 4.2 մ բարձրությամբ՝ 60 սմ բետոնե հիմքով:

Շահագործման փուլում աղբահեռացումը կիրականացվի Տաշիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով: Տեղադրվելու են տեսակավորման աղբամաններ:

Շահագործման փուլում շենքն ապահովված կլինի նաև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, ապահովված կլինի հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով, վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ, հաշմանդամների համար նախատեսված սան հանգույցով, տարածքի մուտքը կահավորված կլինի տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Միխայլովկայի դպրոցի հարավային տարածքի գոնտային մակերեսին նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ:

Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով:

Օդափոխության արտաժաման իրականացվում է արհեստական եղանակով՝ օդը մտնում է ռեկուպերատորային ազրեգատ, տաքացնում է ներածվող օդը՝ խառնման միջոցով, այնուհետև դուրս է մղվում արտաքին միջավայր:



Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից, տեղադրելով առանձին հաշվիչ:

Շինարարության փուլում նախատեսվում է ժամանակավոր ջրագծի անցկացում: Շինարարության համար ջուրը բերվելու է ճանապարհով անցնող ջրատարից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ – հաշվիչ: Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքների հոգալու նպատակով տեղադրվելու է բիոզուգարան՝ լվացարանով: Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միացվելու է բնակավայրի ջրատարին, որի համար կկնքվի պայմանագիր:

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռանում է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին է միանում կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ (Կոյուղու ճնշումային սարքավորում):

Կառուցվելու է մաքրման կայան, որից դուրս եկող մաքրված ջուրը ստորգետնյա խողովակներով միանալու է 100 մ հեռավորության վրա գտնվող ոռոգման առվին:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1. Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 1.2683 հա
2. Ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 3182.0 մ<sup>2</sup>
3. Ընդհանուր բարեկարգման մակերես 9501 մ<sup>2</sup>, որից կանաչապատման մակերեսը՝ 5103 մ<sup>2</sup> :

Կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ, որից հանույթը կկազմի 12683.0 մ<sup>3</sup>, հետլիցքը՝ 1169.9 մ<sup>3</sup>, հողաբուսաշերտը՝ 2200.0 մ<sup>3</sup>:

Բուսաշերտի պահպանումը կատարվելու է 1404-Ն որոշման համաձայն և հետագայում օգտագործվելու է բարեկարգման աշխատանքների ընթացքում, ավելացված հողային հանույթը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Բարեկարգումը կատարվելու է սալիկների, սալվածքների, թեքահարթակների, եզրաքարերի տեղադրմամբ:

Կանաչապատման համար տնկվելու են նոր ծառեր՝ 37 հատ կովկասյան եղևնի (նաև թփերի տեսքով), ասպիրակ՝ 19 հատ, գնդաձև իլնեի՝ 90 հատ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման, փորման, հարթեցման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, վառելիքի արտանետումների, ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը, կապալառուի կողմից օդի աղտոտվածության գործընթացի զսպումների իրականացում, բացառել տարածքում թափոնների բաց այրումը և այլն:

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է:



- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահել շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավագ կամ մանրախիճ,
- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կրավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան՝ 0,84 մ<sup>3</sup> չափերի, ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է բացառել աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, շինարարական աղբն ամբողջությամբ անհրաժեշտ է տեղափոխել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, մետաղական մասերը կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով, շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, բացառել մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:



Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները: Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում, ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովելու նպատակով և այլն:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսվում են ծախսեր, որոնք ներառված են շինարարության նախահաշվի մեջ այլ ծախսեր բաժնում և կիրականացվեն շինարարարական կազմակերպության կողմից:

**Պատճառաբանական մաս.** գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու մարզի Տաշիր համայնքի Միխայլովկա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, Տաշիրի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:



2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Շին-կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Տաշիր համայնքի Միխայլովկա բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան